

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՆԵՉԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՍԲԻՈՆ

*ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

<i>ԱՌԱՐԿԱ</i>	<i>ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՆՏՐՈՒՐԱ</i>
<i>ՖԱԿՈՒԼՏԵՏ</i>	<i>ՄԱՐԶԱՍԱՌՈՂՁԱՐԱՐԱԿԱՆ</i>
<i>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</i>	<i>ԲՈԼՈՐ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԸ</i>
<i>ԿՈՒՐՍ</i>	<i>IV</i>

ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼ Է

Կ.գ.թ., դոցենտ՝ Ա. Մ. ՂԱՐԻԲՅԱՆԸ

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏՈՒՄ

ԱՐՁ. N.

2014 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. N.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Օրգանիզմում տեղի ունեցող ախտաբանական պրոցեսների և դրանց կանխարգելման և բնական ճանապարհով բուժման մեթոդների մասին ուսանողների գիտելիքների ձեռք բերումը կարևոր նշանակություն ունի մանկավարժական գործընթացի իրականացման համար:

Բուժական ֆիզկուլտուրայի դասընթացները կանխորոշում են որպես մանկավարժական բնական կենսաբանական մեթոդ բուժական ֆիզկուլտուրայի ուսուցումը, որոնք ուղղված են ուսանողին օգնելու յուրացնելու տարբեր ներքին հիվանդությունների, հենաշարժողական համարգի վնասվածքների դեպքում բուժական ֆիզկուլտուրայի կիրառման խնդիրները, նպատակները և տարբեր հիվանդությունների դեպքում բուժական ֆիզկուլտուրայի կիրառման առանձնահատկությունը և մեթոդները: Ինչպես նաև կիրառվող վարժությունները, որպես բնական կենսաբանական մեթոդ:

<<Բուժական ֆիզկուլտուրայի>> դասընթացները *ենթադրում են* դասախոսությունների և գործնական պարապմունքների օպտիմալ հարաբերակցություն: Դասախոսությունների ընթացքում լուսաբանվում են առարկայի գիտամեթոդական հիմունքները, գործնական պարապմունքների ընթացքում ուսանողները ամրապնդում են տեսական գիտելիքները և իրականացնում են պրակտիկ գործունեություն:

Դասերի ընթացքում մեծ տեղ է հատկացվում ինքնուրույն աշխատանքներին, որի նպատակն է ուսանողների կողմից գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, ընդհանրացումը, դրանց վերլուծումը և եզրահանգումները:

Դասընթացի *նպատակն է* գիտելիքներ մատուցել օրգանիզմի տարբեր հիվանդությունների մասին, ծանոթացնել դրանց դեպքում կիրառվող բուժական ֆիզկուլտուրայի մեթոդին և կիրառվող բուժական վարժություններին:

Դասընթացի *խնդիրներն են*.

- Ուսանողների շրջանում գիտելիքների յուրացումը:
 - Ստացված գիտելիքների հիման վրա գործնական հմտությունների ձևավորումը:
 - Ապագա մասնագետների պատրաստության մակարդակի բարձրացումը:
- Ծրագրում ներառված են հետևյալ ենթաբաժինները.

1. Ներածություն
2. Բուժական ֆիզկուլտուրան հենաշարժողական ապարատի հիվանդությունների և վնասվածքների դեպքում
3. Բուժական ֆիզկուլտուրան մարսողական համակարգի հիվանդությունների դեպքում
4. Բուժական ֆիզկուլտուրան շնչառական ապարատի հիվանդությունների դեպքում
5. Բուժական ֆիզկուլտուրան սրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում
6. Բուժական ֆիզկուլտուրան վիրաբուժական հիվանդությունների դեպքում
7. Բուժական ֆիզկուլտուրան նյարդային համակարգի հիվանդությունների դեպքում

Տեսական նյութը մատուցվում է ըստ թեմաների, որը նախատեսված են ծրագրով: Գործնական պարապմունքները հիմնականում պետք է անցկացվեն բուժական ֆիզկուլտուրայի դահլիճում: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները սովորում են կիրառել բուժական ֆիզկուլտուրայի վարժությունները, ծանոթանում են կատարման տեխնիկային և մեթոդին:

Առարկան ուսուցանվում է առաջին կիսամյակում, որին հատկացվում է 4 կրեդիտ: Կիսամյակի վերջում առարկան ավարտվում է քննությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԲԱՇՏԱՌԻՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ

Դասախոսություն -24
 Գործնական 24
 Արտալսարանային - 72
 Անհատական - 12

N	Թեմա	դասախոսություն	գործնական
1	Ներածություն	4	4
2	Բուժական ֆիզկուլտուրան հենաշարժողական ապարատի հիվանդությունների և վնասվածքների դեպքում	4	4
3	Բուժական ֆիզկուլտուրան մարսողական համակարգի և նյութափոխանակության հիվանդությունների դեպքում	4	4
4	Բուժական ֆիզկուլտուրան շնչառական ապարատի հիվանդությունների դեպքում	2	2
5	Բուժական ֆիզկուլտուրան սրտանոթային համակարգի հիվանդությունների դեպքում	4	4
6	Բուժական ֆիզկուլտուրան վիրաբուժական հիվանդությունների դեպքում	2	2
7	Բուժական ֆիզկուլտուրան նյարդային հիվանդությունների դեպքում	4	4
ԸՆԴԱՄԵՆԸ		24	24

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՇՐՋԱՆԱԿԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ)**

Մա կար դակ	Գիտելիքներ	Կարողություններ	Հմտություններ
1	3	4	5
Բակ ալա վր	Մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին առնչվող մասնագիտական տեսական և գործնական խոր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեսությունների, սկզբունքների համընդգրկուն ըմբռնման, դրանց քննադատական գնահատման, կատարելագործման, տվյալ մասնագիտական ոլորտում դպրոցների, ուսմունքների մասին գիտաճյուղերի և ուղղությունների մասին իրազեկվածության, դրանց համեմատության և գործնական կիրառության համար	Պատասխանատվության ստանձնում աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու կառավարման համար, որոնք կարող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությանը և զարգացմանը, նախաձեռնության ցուցաբերում, որոշումներ ընդունելու ունակության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում, աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատողների դերի որոշում, այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավարժության զարգացման համար պատասխանատվության ստանձնում, ինքնուրունության դրսևորում ուսման գործընթացում, մասնակցություն նյութական պաշարների պլանավորման ու բաշխման գործընթացին	Վարպետության և նորարարության մասին վկայող առաջանցիկ հմտություններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ մասնագիտական ուսման որևէ բնագավառում բարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու, բարդ ու համալիր տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունակություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեցնելու, մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդներ գործի դնելու, այդ մեթոդները կատարելագործելու և դրանց արդյունավետությունը գնահատելու համար: Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտությունների, հայտնի խրազրային փաթեթների գործնական տիրապետում

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բուժական ֆիզկուլտուրա

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

/Դասախոսություն 4ժ, գործնական 4ժ/

Հասկացություն բուժական ֆիզկուլտուրայի մասին: Բուժական ֆիզկուլտուրայի յուրահատկությունը: Բուժական ֆիզկուլտուրան, որպես համալիր բուժման հիմնական միջոց: Բուժական ֆիզկուլտուրայի զարգացման պատմությունը: Բուժական ֆիզկուլտուրայի բովանդակությունը: Ֆիզիկական վարժությունների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական ազդեցության մեխանիզմները հիվանդ օրգանիզմի վրա: Ֆիզիկական վարժությունների բուժիչ ազդեցության մեխանիզմները: Հասկացություն ռեաբիլիտացիայի (վերականգնում) մասին: Ֆիզիկական վարժությունների ցուցումները և հակացուցումները: Ֆիզիկական վարժությունների հիմնական միջոցները: Ֆիզիկական վարժությունների բնութագրումը, պարապմունքների անցկացման ձևերը:

2. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՍՏՈՒՐԱՆ ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

/Դասախոսություն 4ժ, գործնական 4ժ/

Հասկացություն նորմալ կեցվածքի մասին, կեցվածքի շեղումների առաջացման պատճառները և մեխանիզմները: Կեցվածքի շեղումների տեսակները (կեցվածքի շեղումներ, սկոլիոզներ, հարթաթաթություն): Ֆիզիկական վարժությունների ազդեցության հիմնական մեխանիզմները և բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը կեցվածքի տարբեր շեղումների դեպքում: Հոդային հիվանդություններ՝ արթրոզ, միջողնային օստեոխոնդրոզ, արթրիտներ: Հենաշարժողական ապարատի վնասվածքների համառոտ բնութագրումը և բուժական ֆիզկուլտուրայի դերը և առանձնահատկությունները այդ վնասվածքների և հիվանդությունների դեպքում: Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդի յուրահատկությունները փափուկ հյուսվածքների, կոտրվածքների և հոդերի վնասվածքների դեպքում: Ֆիզիկական վարժությունների բուժիչ ազդեցության մեխանիզմները և բուժական ֆիզկուլտուրայի մեթոդի յուրահատկությունները գանգոլեղի և ողնուղեղի վնասվածքների դեպքում:

3. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՍՏՈՒՐԱՆ ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

/Դասախոսություն 4ժ, գործնական 4ժ/

Ֆիզիկական վարժությունների ազդեցության հիմնական մեխանիզմները մարսողական հիվանդությունների դեպքում: Մարսողության օրգանների հիվանդությունների հիմնական ախտանիշները: Գաստրիտ, խոցային հիվանդություն, հեպատիտ և նրանց համառոտ բնութագրումը: Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդի յուրահատկությունները: Նյութափոխանակության հիվանդություններ, հիմնական ախտանիշները: ճարպակալում, շաքարախտ, պոդագրա և նրանց համառոտ բնութագրումը բՖկ մեթոդը:

4. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՍՏՈՒՐԱՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

/Դասախոսություն 2ժ, գործնական 2ժ/

Շնչառական ապարատի հիվանդությունների հիմնական ախտանիշները: Թոքաբորբ, բրոնխիալ ասթմա, պլևրիտ, էմֆիզեմա հիմնական կլինիկական նշանները: Ֆիզիկական վարժությունների ազդեցության հիմնական մեխանիզմները և կիրառման մեթոդը:

5. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՍՏՈՒՐԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

/Դասախոսություն 4ժ, գործնական 4ժ/

Սրտանոթային համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները: Սրտամկանի ինֆարկտ, ստենոկարդիա, սրտի արատներ, աթերոսկլերոզ, հիպերտոնիկ հիվանդություն, հիպոտոնիկ հիվանդություն և նրանց հիմնական կլինիկական նշանները: Բուժական ֆիզկուլտուրայի կիրառման ցուցումները և հակացուցումները: Ֆիզիկական վարժությունների բուժիչ ազդեցության մեխանիզմները: Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդի յուրահատկությունը:

**6. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՆՏՈՒՐԱՆ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ
/Դասախոսություն 2ժ, գործնական 2ժ/**

Հասկացությունն վիրաբուժական հիվանդությունների մասին: Վիրաբուժական հիվանդությունների և վնասվածքների համառոտ դասակարգումը: Կրծքավանդակի և որովայնի խոռոչի օրգանների հիվանդությունները և վնասվածքները, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը:

**7. ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ
/Դասախոսություն 4ժ, գործնական 4ժ/**

Նյարդային համակարգի հիվանդությունների և վնասվածքների բնութագրումը (սպաստիկ և թույլ պարեզներ) :

1. Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների բնութագրումը և հիմնական կլինիկական նշանները, մեթոդի առանձնահատկությունները: Գլխուղեղի արյան շրջանառության խախտումներ՝ աթերոսկլերոզ, ինսուլտներ, բորբոքային պրոցեսներ, էնցեֆալիտներ:
2. Ծայրամասային նյարդային համակարգի հիվանդությունների և վնասվածքների հիմնական կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը: Բեխտերևի հիվանդություն: Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը:

**ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՍՈՂՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է՝**

Գիտենան

- Բուժական ֆիզկուլտուրա առարկայի նպատակը և խնդիրները:
- Ֆիզիկական վարժությունների ազդեցությունը օրգանիզմի վրա:
- Առարկայի ցուցումները և հակացուցումները, շարժողական ռեժիմները:
- Բուժական ֆիզկուլտուրայի միջոցները, դասակարգումը և բնութագիրը:
- Ֆիզիկական վարժությունների բուժական կիրառման չափավորման սկզբունքները, հիմնական ելման դրությունները, բնութագիրը:
- Բուժական ֆիզկուլտուրայի դասի կառուցվածքը, խտությունը, ֆիզիոլոգիական կորը:
- Բուժական ֆիզկուլտուրայի կիրառումը տարբեր օրգան-համակարգերի հիվանդությունների ժամանակ:

Կարողանան

- Ճիշտ ներկայացնել տարբեր հիվանդությունների ժամանակ կիրառվող բուժական մարմնամարզության մեթոդը:
- Ինքնուրույն փորձնական կարգով անցկացնել բուժական ֆիզկուլտուրայի դասը:

Տիրապետեն

- Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդին, կիրառման սկզբունքներին:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Հասկացությունն բուժական ֆիզկուլտուրայի մասին:

- Բուժական ֆիզկուլտուրայի յուրահատկությունը:
 - Բուժական ֆիզկուլտուրան, որպես համալիր բուժման հիմնական միջոց:
-

- Բուժական ֆիզկուլտուրայի զարգացման պատմությունը: Բուժական ֆիզկուլտուրայի բովանդակությունը: Ֆիզիկական վարժությունների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական ազդեցության մեխանիզմները հիվանդ օրգանիզմի վրա:
- Ֆիզիկական վարժությունների բուժիչ ազդեցության մեխանիզմները:
- Հասկացություն ռեաբիլիտացիայի (վերականգնում) մասին:
- Ֆիզիկական վարժությունների ցուցումները և հակացուցումները:
- Ֆիզիկական վարժությունների հիմնական միջոցները:
- Ֆիզիկական վարժությունների բնութագրումը, պարապմունքների անցկացման ձևերը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Բուժ.ֆիզկ. առարկան, նրա առանձնահատկությունները, նպատակը և խնդիրները:
2. Բուժական ֆիզկուլտուրայի պատմությունը:
3. Ֆիզիկական վարժությունների ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա:
4. Ֆիզիկական վարժությունների ներգործության տոնիզացնող ազդեցությունը:
5. Ֆիզիկական վարժությունների բուժական ներգործության սնուցող ազդեցությունը:
6. Ֆիզիկական վարժությունների բուժական կիրառման փոխհատուցման ձևավորման մեխանիզմը:
7. Ֆիզիկական վարժությունների ներգործության գործունեության /ֆունկցիոնալ/ կազմավորման մեխանիզմը:
8. Բուժական ֆիզկուլտուրայի հիմնական միջոցները, դասակարգումը, բնութագիրը:
9. Մեխանոթերապիա և աշխատանքաթերապիայի միջոցները, հակացուցումները:
10. Բուժական ֆիզկուլտուրայի մեթոդի ընդհանուր պահանջները, ցուցումները, հակացուցումները:
11. Ֆիզիկական վարժությունների բուժական կիրառման շափավորման սկզբունքները, հիմնական ելման դրությունը, բնութագիրը:
12. Բուժական ֆիզկուլտուրայի պարապմունքների ձևերը, նրանց բնութագիրը:
13. Բուժական ֆիզկուլտուրայի դասի կառուցվածքը, նրա ֆիզիոլոգիական կորը, դասի խտությունը:
14. Շարժողական ռեժիմները, նրանց բնութագիրը:
15. Ֆիզիկական վարժությունների ազդեցության հետազոտման մեթոդները:
16. Ֆիզիկական վարժությունների ազդեցության հիմնական մեխանիզմները աղեստամոքսային և լյարդի հիվանդությունների դեպքում:
17. Գաստրիտ, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդիկան:
18. Ստամոքսի և 12-մատյա աղիքի խոցային հիվանդության բուժ.ֆիզկուլտ-ի մեթոդիկան:
19. Լյարդի բորբոքում (հեպատիտ), ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
20. Լեղուղիների դիսկինեզիա, ձևերը, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
21. Աղիների հիվանդությունների բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
22. Ֆիզիկական վարժությունների բուժ. ազդեցության հիմնական մեխանիզմը նյութափոխանակության խանգարումների դեպքում:
23. Գարպակալում, պատճառները, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
24. Շաքարախտ, կլինիկական ձևերը, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
25. Պոդագրա, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
26. Հոդերի հիվանդությունների դասակարգումը, ֆիզ. վարժ. ազդեցության մեխանիզմը:
27. Արթրոզներ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան ըստ բուժման շրջանի:
28. Միջոդային օստիոխոնդրոզ, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
29. Արթրիտներ, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
30. Սպեցիֆիկ ինֆեկցիոն արթրիտներ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
- 31.
32. Ոչ սպեցիֆիկ արթրիտներ, ԳՂԱՆՆԵՐԸ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
33. Կեցվածքի խանգարումներ, դրանց հիմնական տարատեսակները, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
34. Հարթաթաթթվային, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը:
35. Հասկացություն սկոլիոզների մասին, պատճառները, ձևավորման մեխանիզմը, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:

36. Վիրաբուժական հիվանդությունների դասակարգումը, ֆիզ. վարժ. բուժ. ազդեցությունը մեխանիզմի վնասվածքների դեպքում:
37. Հասկացությունն վնասվածքի և վնասվածքային հիվանդության մասին (ուշագնացություն, կոլապս, շոկ), առաջին օգնությունը:
38. Կոտրվածքներ, բուժ. ֆիզկ. խնդիրները ըստ բուժ. շրջանների:
39. Բազկի և նախաբազկի դիաֆիզար կոտրվածքների բուժ. ֆիզկ.:
40. Ազդրի վզիկի կոտրվածքների բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
41. Ծնկային հոդի վնասվածքների բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
42. Ծնկային հոդի կապանային ապարատի վնասվածքները, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
43. Ողնաշարի կոտրվածքների բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
44. Կրծքավանդակի օրգանների վիրաբուժական միջամտությունը նախավիրահատական շրջանում, խնդիրները, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
45. Որովայնային խոռոչի օրգանների վիրաբուժական միջամտությունները: Հասկացությունն նախավիրահատական և հետվիրահատական շրջանների մասին:
46. Այրվածքային հիվանդություններ, հիմնական արտահայտությունները, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
47. Ցրտահարություն, աստիճանները, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
48. Ռիսային հոդի էպիֆիզար կոտրվածքներ, բուժ. ֆիզկ. մեթոդիկան:
49. Սրտանոթային համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները:
50. Արյան շրջանառության անբավարարության, պատճառները աստիճանները:
51. Արյան շրջանառության անբավարարության, 1-ին աստիճանի, բուժ.ֆիզկ. մեթոդիկան:
52. Արյան շրջանառության անբավարարության, 2-րդ աստիճանի, բուժ.ֆիզկ. մեթոդիկան:
53. Սրտամկանի բորբոքում (միոկարդիտ) նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
54. Սրտամկանի դիստրոֆիա, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
55. Էնդոկարդիտ, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
56. Ռևմատիզմ, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
57. Սրտի արատներ, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
58. Աթերոսկլերոզ, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
59. Հիպերտոնիկ հիվանդություն, նրա փուլերը, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
60. Սրտամկանի ինֆարկտ, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
61. Ձարկերակային խցանող հիվանդություններ, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
62. Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմը սիրտ-անոթային համակարգի հիվանդ. դեպքում:
63. Շնչառական համակարգի հիվանդությունների հիմնական ախտանիշները:
64. Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության հիմնական մեխանիզմները օրգանների հիվանդությունների դեպքում:
65. Թոքաբորբ, պատճառները, կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
66. Բրոնխիտ, կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
67. Բրոնխյալ ասթմա, նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
68. Թոքախտ, կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
69. Պլևրիտ, կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
70. Թոքերի էմֆիզեմա, կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտ. մեթոդիկան:
71. Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների բնութագրումը և հիմնական կլինիկական նշանները, մեթոդի առանձնահատկությունները:
72. Գլխուղեղի արյան շրջանառության խախտումներ՝ աթերոսկլերոզ, ինսուլտներ:
73. Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների բորբոքային պրոցեսներ, էնցեֆալիտներ:
74. Ծայրամասային նյարդային համակարգի հիվանդությունների և վնասվածքների հիմնական կլինիկական նշանները, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդը:
75. Անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվ.) նշանները, բուժ. ֆիզկ. մեթոդը:

ԱՌԱՐԿԱՅԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԸ

- Գնահատման ձևերը՝ ստուգողական աշխատանք:
- Գնահատման ընթացակարգեր՝ յուրաքանչյուր ստուգման համար 100 միավորանոց սանդղակ՝ գիտելիքների, ակտիվության, ինքնուրույն աշխատանքների կատարման մակարդակ, հաճախումների բաղադրիչներ:

